

ՀՀ Ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 29/9

18 հուլիսի 2015 թ.

Քննարկվեց Աիդա Մանուչարյանի 19.06.2015 թ-ի վարչական բողոքը ՀՀ ՖՆ Վանաձորի ՏՀՏ պետի 15.04.2015 թ-ի թիվ 318 որոշման դեմ:

Աիդա Մանուչարյանի վարչական բողոքում բերված փաստարկները.

Աիդա Մանուչարյանը (այսուհետ նաև բողոքաբեր) հայտնում է 2015 թ-ի ապրիլի 15-ին ՀՀ ՖՆ Վանաձորի տարածքային հարկային տեսչության պետը կայացրել է հարկ վճարողից ժամանակին չվճարված հարկային պարտավորությունների գծով վճարման ենթակա գումարը գանձելու վերաբերյալ թիվ 318 որոշումը:

Ըստ 318 որոշման, ՀՀ ՖՆ Վանաձորի ՏՀՏ պետը քննարկելով Աիդա Մանուչարյանի վերաբերյալ վարչական վարույթի նյութերը պարզել է, «13.04.2015թ. դրությամբ Աիդա Մանուչարյանի չկատարած հարկային պարտավորությունները կազմում են 314.491 դրամ գումար, որից ստուգման ակտի 10%-ի գումար 15108 դրամ, պետ. տուրքի տույժ 299.383 դրամ: Նշված գումարներն առաջացել են 26.02.2007 թ-ի թիվ 2333448 ստուգման ակտով և սահմանված ժամկետներում պետական տուրքի գումարները չվճարելու հետևանքով հաշվարկված տույժերից»:

Բողոքաբերի կողմից Ա/Ձ-ն գրանցվել է 2005 թ-ին և 2005 թ-ի հուլիսի 8-ին ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի լրցենգավորման բաժնի կողմից տրվել է դեղատնային գործունեության թիվ Ա-XX-000262 լիցենզիան:

2009 թ-ի մայիսի 18-ին Առողջապահության նախարարի թիվ 688-Ա հրամանի համաձայն (իմ կողմից ներկայացված դիմումի հիման վրա) ուժը կորցրած է ճանաչվել դեղատնային գործունեության թիվ Ա-XX-000262 լիցենզիան:

Պետական ռեգիստրի տարածքային բաժնի կողմից 2011 թ-ի դեկտեմբերի 22-ին «Աիդա Մանուչարյան Ա/Ձ-ն» հաշվառումից հանվել է:

Բացի այդ, 2008 թ-ի հունվարի 1-ին ՀՀ ԿԱ ՀՊԾ Վանաձորի հարկային տեսչության պետի կողմից տրվել է տեղեկանք, որի համաձայն 01.02.2008 թ-ի դրությամբ բյուջեի նկատմամբ բողոքաբերը որևէ պարտավորություն չունի, այդ թվում՝ ապառք, տույժ, տուգանք:

ՀՀ Ֆինանսների նախարարության կանաձորի տարածքային հարկային տեսչության պետի թիվ 318 որոշման հիմքում ընկած 26.02.2007 թվականի թիվ 2311448 ստուգման ակտը, որի վերաբերյալ բողոքաբերը տեղյակ չէ և երբևէ նման ակտ չի ստացել: Նշված որոշմամբ գանձման առաջադրված 314.491 դրամ գումարն իր մեջ ներառում է նաև պետական տուրքի տույժ՝ 299.383 դրամ:

«Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.1 հոդվածի դրույթներից հետևում է, որ թիվ 318 որոշման կայացման հիմքում ընկած 26.02.2007 թ-ի ստուգման ակտը, ինչպես նաև պետական տուրքի տույժերը չեն կարող գանձվել, քանի որ պետք է կիրառվի «Հարկերի մասին» ՀՀ օրենքով նախատեսված վաղեմության ժամկետները:

Որոշմամբ վկայակոչված ստուգման ակտը (որի մասին բողոքաբերը տեղյակ չէ) կայացվել է դեռևս 2007 թ-ին, այսինքն՝ ստուգման ակտի կայացման օրը՝ 26.02.2007 թ-ին, արդեն իսկ հարկային մարմիններին հայտնի է դարձել խախտման փաստը և

որևէ գործողություններ չեն կատարվել ստուգման ակտով սահմանված գումարը գանձելու ուղղությամբ, կամ տեղեկացնելու ստուգման ակտի վերաբերյալ, դրանով բողոքաբերին զրկել են այն բողոքարկելու իրավունքն իրացնելու հնարավորությունից:

Ինչ վերաբերում է պետական տուրքի տույժին՝ գումարով 299.383 դրամ, ապա ՀՀ առողջապահության նախարարի հրամանով 2009 թ-ի մայիսի 18-ին ուժը կորցրած է ճանաչվել դեղատնային գործունեության լիցենզիան, և արդեն անցել է ավելի քան 5 տարի, հետևաբար նշված դեպքում հարկային տեսչության կողմից պետք է կիրառվի վաղեմության 3 տարվա ժամկետը:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.1 հոդվածով սահմանված դրույթները բողոքաբերը խնդրում է վերացնել ՀՀ ՖՆ վանաձորի տարածքային հարկային տեսչության պետի 15.04.2015թ. թիվ 318 որոշումը:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ Վանաձորի ՏՀՏ պետը, քննարկելով Աիդա Մանուչարյանի վերաբերյալ վարչական վարույթի նյութերը պարզել է, որ 13.04.2015 թ-ի դրությամբ նրա չկատարված հարկային պարտավորությունները կազմում են 314.491 դրամ, որից ստուգման ակտի 10% 15.108 դրամ, պետական տուրքի տույժ՝ 299.383 դրամ: Նշված գումարներն առաջացել են 26.02.2007 թ-ի թիվ 2311448 ակտով և սահմանված ժամկետում պետական տուրքի գումարները չվճարելու հետևանքով:

Արդյունքում, ղեկավարվելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1 հոդվածի և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55-րդ, 56-րդ, 58-րդ, 88-րդ հոդվածների դրույթներով ՀՀ ՖՆ Վանաձորի ՏՀՏ ՏՀՏ պետի կողմից 15.04.2015 թ-ին ընդունվել է թիվ 318 որոշումը (այսուհետ նաև Որոշում) Աիդա Մանուչարյանից 314.491 դրամ պարտավորության գումար գանձելու վերաբերյալ:

Բողոքում բերված պնդումների վերաբերյալ, որ Որոշման հիմքում ընկած 26.02.2007 թ-ի թիվ 2311448 ստուգման ակտի վերաբերյալ բողոքաբերը տեղյակ չէ և երբևէ նման ակտ չի ստացել, ապա հարկ է նշել, որ դրանք հիմնավոր չեն, հետևյալ պատճառաբանությամբ:

Սույն գործում առկա է ՀՀ ԿԱ ՀՊԾ Վանաձորի ՏՀՏ 26.02.2007 թ-ի թիվ 2311448 ստուգման ակտը (այսուհետ նաև Ակտ): Վերջինիս ուսումնասիրությամբ Հանձնաժողովն արձանագրեց, որ նշված ակտի «Ստացա ակտի մեկ օրինակը» մասում դրված է Աիդա Մանուչարյանի ստորագրությունը՝ «Չունեմ առարկություն» նշագրմամբ:

Բողոքում բերված այն պնդումների վերաբերյալ, որ ղեկավարվելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.1 հոդվածի դրույթներով, թե՛ Ակտով, թե՛ պետական տուրքի տույժերի գծով պարտավորությունները չեն կարող գանձման առաջադրվել, նշվեց հետևյալը:

Տվյալ դեպքում «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.1 հոդվածի դրույթները կիրառելի չեն, քանի որ Ակտով արձանագրված խախտումը հայտնաբերվել է Ակտի կազմման օրվա դրությամբ, այլ ոչ թե Որոշումը կայացնելից: Բացի այց, Ակտով

արձանագրված գումարները գրանցվել են ընկերության անձնական հաշվի քարտում և հարկային մարմնին հայտնի են եղել գրանցման օրվանից:

Ինչ վերաբերվում է նրան, որ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.1 հոդվածի համաձայն պարտավորություններ չեն կարող առաջադրվել նաև պետական տուրքի գծով, ապա այս կապակցությամբ հարկ է նշել, որ պետական տուրքի վերաբերյալ հարաբերությունները կարգավորվում են «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով: Այսինքն, «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.1 հոդվածի դրույթները տվյալ պարագայում կիրառելի չեն:

Միևնույն ժամանակ, Հանձնաժողովը հարկ է համարում անդրադառնալ պետական տուրքի գծով գանձման առաջադրված գումարների հիմնավորվածությանը: Այսպես, 15.12.2005թ. «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-11-Ն օրենքով (ուժի մեջ է մտել՝ 28.01.2006թ.-ին) «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի երրորդ մասը շարադրվել է նոր խմբագրությամբ, որի համապատասխան՝

նույն օրենքով սահմանված տարեկան հերթական պետական տուրքի վճարումը յուրաքանչյուր առաջիկա տարվա համար կատարվում է մինչև առաջիկա տարին սկսելը՝ լիազոր մարմնի կողմից տարեկան պետական տուրքի գանձման օբյեկտ հանդիսացող ծառայությունների մատուցման կամ գործողությունների կատարման արդյունքում փաստաթղթերի (իրավունքների, թույլտվությունների, արտոնագրերի, լիցենզիաների) վրա նշված փաստաթղթերի (իրավունքների, թույլտվությունների, արտոնագրերի, լիցենզիաների) տրման ամսաթվից ոչ ուշ:

Նույն օրենքով «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքը լրացվել է 6.1-րդ հոդվածով, որի 1-ին կետի 2-րդ և 3-րդ ենթակետով սահմանվել է, որ ֆիզիկական անձանց և կազմակերպությունների հերթական տարեկան պետական տուրքի վճարման պարտավորությունը դադարում է՝

2) մինչև հերթական տարեկան պետական տուրքի վճարման համար նույն օրենքով սահմանված ժամկետի վերջին օրը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով լիազոր մարմնի կողմից տարեկան պետական տուրքի գանձման օբյեկտ հանդիսացող ծառայությունների մատուցման կամ գործողությունների կատարման արդյունքում տրված փաստաթղթերի (իրավունքների, թույլտվությունների, արտոնագրերի, լիցենզիաների) գործողության դադարեցման (ուժը կորցրած ճանաչվելու) դեպքում:

3) եթե տարեկան պետական տուրք վճարողը մինչև հերթական տարեկան պետական տուրքի վճարման համար սույն օրենքով սահմանված ժամկետի վերջին օրը լիազոր մարմին դիմում է ներկայացնում լիազոր մարմնի կողմից տարեկան պետական տուրքի գանձման օբյեկտ հանդիսացող ծառայությունների մատուցման կամ գործողությունների կատարման արդյունքում տրված փաստաթղթերի (իրավունքների, թույլտվությունների, արտոնագրերի, լիցենզիաների) գործողության դադարեցման (ուժը կորցրած ճանաչվելու) համար և այդ դիմումի հետագա բավարարման դեպքում:

Տվյալ դեպքում Աիդա Մանուչարյանը լիազոր մարմնի կողմից տրված լիցենզիայի գործողության դադարեցման համար լիազոր մարմին դիմում է ներկայացրել 05.05.2009թ.-ին՝ մինչև հերթական տարեկան պետական տուրքի վճարման համար նույն օրենքով սահմանված ժամկետի վերջին օրը, այն է՝ մինչև 08.07.2009թ.: Ավելին, նրան տրված լիցենզիայի գործողությունը լիազոր մարմնի որոշմամբ դադարեցվել է (ուժը կորցրած է ճանաչվել) 18.05.2009թ.-ին:

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը գտնում է, որ քննարկվող դեպքում պետական տուրքի գծով տույժերը կարող են հաշվարկվել մինչև Աիդա Մանուչարյանի կողմից լիցենզիայի գործողության դադարեցման համար դիմում ներկայացնելու օրը, այն է՝ 05.05.2009 թ-ը:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո թ ո շ ու մ է՝

1. Չեղյալ համարել ՀՀ ՖՆ Վանաձորի ՏՀՏ պետի 15.04.2015 թ-ի թիվ 318 որոշումը:

2. ՀՀ ՖՆ Վանաձորի ՏՀՏ պետին՝ կայացնել քաղաքացի Աիդա Մանուչարյանից ժամանակին չվճարված հարկային պարտավորությունների գծով վճարման ենթակա գումարները գանձելու մասին նոր որոշում, պետական տուրքի գծով տույժերը հաշվարկելով մինչև Աիդա Մանուչարյանի կողմից լիցենզիայի գործողության դադարեցման համար դիմում ներկայացնելու օրը, այն է՝ 05.05.2009 թ-ը:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ

